





վրայ կը յօրինէին իրենց տաղաւարները։ Հետագային, փորձառութիւնը սորվեցուց բանաւոր մարդոց, որոնք հետզհետէ գեղջկական գմբէթները կազմակերպելով և կատարելագործելով հասան փառաւոր և պայծառ գմբէթներուն, որ ամէն երկրի մէջ կը կառուցուէին արքունական տուներու կամ, ինչպէս օր. Հոռմի բաղնիքներու, մէջ։ Ընդունելով ուրեմն, ամէն ազգերու մօտ գմբէթի նախնական ծանօթութիւնը, եւ անոր շինութիւնը քառակուսի կամ կլոր պատերու վրայ, մենք խորհեցանք առաջադրելու հետեւեալ հարցը. — Ո՞վ եղաւ քաղաքակրթեալ ազգերու մէջ առաջինը որ վերցուց տան պատերու վրայէն «թասը» կամ գմբէթը և քաջաշանդուզն կերպով զայն զետեղեց քառակուսի դատարկութեան մը վրայ, միացրեց իր շրջանը, չորս սիւները, չորս կամարներով և կլորակ թեւերով բոլորեց պսակը, որոնց վրայ կանդաղեց գնդաձեւ գմբէթը օդին մէջ առկալիս։ —

Ահա այս է լուծուելիք հարցը։

Կեդրոնական գմբէթաւոր եկեղեցի մը թուեցաւ քրիստոնէական ճարտարապետութեան մէջ, հանճարեղ նորութիւն մը, սկզբնատիպ և միանգամայն գեղեցիկ, հաճոյական քրիստոնէական հոգւոյն, որոնց գիւտը և հայրութիւնը, կը համարձակի իրեն վերագրել մեր խոնարհ Հայաստանը։ Մեր հակառակորդները, հայկական քրիստոնէական ճարտարապետութեան արժէքը նուազեցնելու համար, չկարենալով ժըխտել անոր սկզբնատիպութիւնը, անոր զարգացումն և կատարելութեան հասնիլը մինչեւ Ժ և ԺԳ դարերը, զուտ հայ աշխարհի մէջ՝ ըսին որ Հայ արուեստը կախուած է.

- Ա) Պարսկականէն,
- Բ) Ասորականէն,
- Գ) Հռոմէականէն,
- Դ) Բիւզանդականէն, և այլն։

Հնադարեան գմբէթները, ըսած ենք, աշխարհիս բոլոր ժողովուրդներուն մէջ, ինչ տարբեր ձեւով և չափով և մեծութեամբ ալ ըլլան, իրենց եզրակացութիւնը գտան Հռոմի Պանթէոնին մէջ՝ որ ամէնուն կա-

տարեալ օրինակն է։ Սա գետնի վրայ կը գտնուի։ Այս հիմքը դնելէ վերջ կը յայտարարենք որ Հայաստան ոչինչ կը պարտի Պարսկաստանի՝ նկատմամբ կեդրոնական շինուած գմբէթաւոր եկեղեցիներու։

Ա) Հայ արուեստը կախում չունի պարսկականէն, որովհետեւ օրինակ բերուած շէնքերը, երկրին օտար և եկամուտ են։ Օրինակի համար.

ա) Կիւրոսի գերեզմանը։ — Ասոր նկատմամբ Կտեհաս պատմաբանը կը գրէ. «Արիստորուլոս Մեծն Աղեքսանդրի հրամանով շինեց՝ փոքր Ասիոյ Բոնիաց ճաշակով»։ ուրեմն պարսկական արուեստ չէ։

բ) Դարեհի գերեզմանը։ — Սա կ'ենթադրուի շինած ըլլան եգիպտական գերինները, զորս բերաւ Կամբիսէս, ճարտարապետական կերպարանքի մը համար, որ յատուկ է Եգիպտացւոց, այս է փողրակը (gorge) որ դրան սեմին վրայ կը տեսնուի։ Նոյն այս պատկերին ձեւը Դարեհէն առաջ ի գործածութեան էր փոքր Ասիոյ շէնքերուն մէջ. պատմական փաստեր վերջիններու համար աւելի համոզիչ են, վասնզի թէ Կիւրոս, թէ Դարեհ և թէ Քսերքսէս, փոքր Ասիայէն Պարսկաստան գերեցին տարան անթիւ անհամար գերիններ, որոնք կարող եղան կերտելու Դարեհի շիրիմն և ուրիշներ։

գ) Իսկ ինչ որ կը վերաբերի Պերսեպոլիս քաղաքին, Քսերքսէս իր մայրաքաղաքի կառուցումին համար՝ Պարսկաստան փոխադրեց Փոլիզիոյ Երիտրիա և Մելիտոս՝ քաղաքներուն բնակիչները։ Քսերքսէս գործի լծելով յոյն ճարտարապետներ և վարպետներ՝ ուզեց գերազանցել Նինուէն ու Բաբելոնը։ Ուստի ինչ զարմանք եթէ այսօր հնագիտութեան պարապողներ հանդիպին փոխառութիւններու եւ նմանութիւններու Պարսկաստանի եւ Նինուէի, Եգիպտոսի և փոքր Ասիոյ Փոլիզիոյ շինութեանց միջեւ. որով գոյութիւն չունի

1. Ենթադալար Իսիդորոսի, որ եղաւ մէկը այն ճարտարապետներէն որոնք Ս. Սոփիան կերտեցին։

յատկապէս պարսկական բնորոշ ըսուած արուեստ մը։

դ) Սարուստանի պալատը։ — Ասոր ալ նկատմամբ կայ այն կարծիքը թէ Փոլիզ գացի արուեստաւորներ կառուցած ըլլան, ոչ թէ Արեւմտեան ժամանակ, այլ Պարթեւ թագաւորներու, որովհետեւ ասոր նման շինութիւններու կը հանդիպինք Փարսիստանի կողմերը, որոնց վրայ կը գրտնուին նաեւ եզական մանրամասնութիւնները փողրակներու (gorge)։ Պր. Դիոյլաֆոսայ կը գրէ. «Սարուստանի պալատի ձուածեւ գմբէթը կը հանգչի չորս անկիւնաւալերու և չորս կամարապսակի վրայ որ կը յենու կողմնակի պատերու վրայ. որով ոչ մէկ նմանութիւն ունի հայկական գնդաձեւ գմբէթին հետ, որ քառակուսի տարածոցի վրայ կը գտնուի գմբէթաղ թեւերով. ուստի անկարելի է որ և է նմանութիւն կամ ազդեցութիւն գտնել որ Հայ եկեղեցւոյ քրիստոնէական ճարտարապետութեան վրայ եղած ըլլայ։

Ե) Կ'ըսեն՝ Ասորական ճարտարապետութեան ազդուած։ — Մեր հակառակորդներու կարծիքը հիմնուած է թիւր ենթադրութեան մը վրայ որ հետեւանք՝ է սխալ աւանդութեան կամ պատմական սխալի մը վրայ. այսինքն անոնք անկասկած կը հաւատան Արգարու Հայոց թագաւորի զրոյցին, որով քրիստոնէական հաւատքի միջոցաւ, ասորական արուեստը սպրդեցաւ Հայաստան։ Առ այժմ դիտել կու տամ որ քննադատութիւնն առաջին դարէն մինչեւ երկրորդ դարու վերջերը փոխադրեց Արգարու զրոյցը։

Բայց անոր դէմն ունինք աւելի հաստատուն աւանդութիւն մը, պատմական, որ արդէն Հայաստան երրորդ դարու կէսերէն Աղեքսանդրիոյ եկեղեցւոյն ազդեցութեան տակն էր։ Եւսեբիոս իր եկեղեցական պատմութեան մէջ կը յիշատակէ մեծն Դիոնիսիոսի զրած նամակը փոքր Հայոց Մեհրուժան անունով եպիսկոպոսին, Կեսարիոյ կապաղովկացւոց արքեպիսկոպոսին ձեռքով։

Գրիգոր Լուսաւորիչ և Տրդատ Թագա-

ւոր ի տղայութենէ Կեսարիա կրթուեցան։ Իրեւ երկրորդ Առաքեալ Հայոց՝ Ս. Գրիգոր իր ձեռնադրութիւնն ընդունեցաւ Կեսարիոյ արքեպիսկոպոսէն, նաեւ իր որդիքն եւ յաջորդներն Հայաստանեայց կաթողիկոսական աթոռին վրայ։ Արդ, որովհետեւ պաշտօնական քրիստոնէութիւնը Սիւրիայէն չմտաւ Հայաստան, հետեւապէս և ոչ անոր ճարտարապետական ազդեցութեւնը տարածուեցաւ Հայաստանի վրայ։

Գ) Արդեօք Հայաստան կը պարտի իր արուեստը Հռոմին։ —

Արեւմտեան ճարտարապետները կը յենու Կայսերական Հռոմի աւանդութեանց վրայ, որ դարերու ընթացքին ապրեցաւ և աճեցաւ։ Իր արուեստը Կեդրեւէն իւրզուեցաւ և տարածուեցաւ մինչեւ հեռաւոր սահմաններ, այն ատեն երբ Հռոմէական տիրապետութիւնը միահեծան կը տիրէր աշխարհի։ Հայաստան ըմբոստացող մը չէր կրնար ըլլալ։ Ըստ անուանի իտալացի Ռիւդիլրա ճարտարապետին, կեդրոնական գմբէթի կառուցումը անպայման կը ծագի հռոմէական արուեստէն. իմ բարեկամի համար, այս անգամ «արեւը արեւմուտքէն կը ծագէր»։ Այս արուեստի ծագումը կ'երթար կը փնտռէր Հռոմի գետնադամներուն մէջ, եւ կը յաւելուր իսկոյն. «Չկարողացաւ այն տմոյն և մթին միջավայրին մէջ զարգանալ, որովհետեւ կայսերական աթոռին փոխադրութեան հետ ի Բիւզանդիոն, այս արուեստն ալ ի միասին զաղթեց Արեւելք, ուր զուգեցաւ Արեւելեան արուեստին հետ, արեւելցոց վառվռուն հանճարը կատարելագործեց, ապա յաղթանակով վերադարձաւ արեւմուտք։

Գետնադամներէն դուրս, ի նկատի պիտի առնեմ իտալական արուեստի նախընթացները, մինչեւ վերածնունդի հրա-

1. Մեհրուժան եպիսկոպոսին անունը Արծրունաց նախարարութեան յատուկ անուն մ'է, և յաճախիկ գործածուած, ուսկից կարելի է ենթադրել որ նաեւ Մեծ Հայոց անգամ Աղեքսանդրիոյ եպիսկոպոսին ազդեցութեան տակ կը գտնուէին։





շագեղ գմբէթները: Ինչպէս հաւանած են շատերը Յ. Ռիփոյիրայի հետ, կայսերական շինութիւնները ծառայած են Վերածնունդի ճարտարապետներուն, իբրեւ աստիճաններ որոնցմէ ելան հասան մինչեւ այն բարձրութեան:

Համառոտասիրութեան համար, զանց ընելով կարգ մը երկրորդական յիշատակարաններ, կանգ կ'առնեմ այն կարեւորագոյններուն վրայ, որոնք ճարտարապետութեան ուսանողներու քննութեան ծրագրին մէջ կը մտնեն: Ժամանակագրական կարգով կու գայ. ա) Պանթէոնը. բ) Անահայ կամ Մեղիկա Աստղիկան մեհեանը. գ) Սրբուհի Կոստանցա, զ) Լատերանո Ս. Յովհաննէս մայր տաճարին Մկրտարանը: —

1) Այսօրոշան Պանթէոնը, երրորդ կառուցուածքն է Ագրիանոս կայսեր հրամանով, շուրջ 120ին (Յ. Բ.) անոր կերտողն եղաւ յոյն երեւելի ճարտարապետ Ապոլլոդորոս Դամասկացին: Հետեւապէս Հոմոփ զպրոցին չի պատկանիր:

2) Մեղիկա Աստղիկան շէնքը ամենահետաքրքրական կոթող մ'է. բայց ոչ շինութեան տարին և ոչ շինողներուն անունը կը յիշուի: Բայց որովհետեւ նմանօրինակ շինութեան մը արդէն հանդիպած են Ադրիանոս կայսեր ամարանոցին մէջ, թիւով ի տակ, հաւանական է որ անկատար մէկ նմանութիւնն է կատարեալ տիպարին զոր կայսրը բերած էր արեւելքէն:

3) Սրբուհի Կոստանցա, Նոմենտեան ճառարարհի վրայ:—Հոյակապ շէնք մը անտարակոյս հեթանոսութեան ժամանակէն է. թագի կամ կամարներու չընաղ խճանդ կար զարդերը և հովուական տեսիլները Աղեքսանդրեան դարոցին կը պատկանին: Գերեզմանի ծառայեր է: Տարակոյս չկայ որ Կոստանց Քլորոս իրեն և իրեններուն համար շինել տուած է: Ամփոփումս Մարկելինոս կը համարի որ նա եղած է Փղաւեան ընտանեաց կայսերական դամբարանը: Բնութեան կեղծոնը դրուած էր պորփրեայ հսկայ շէնքի մէջ մինչեւ ժեղար, և հիմա կը պահուի Վատիկանեան թան-

գարանին մէջ: Փնտռած եմ անոր վրայ քրիստոնէական նշան և չեմ գտած. ամբողջութիւնը հեթանոսութիւն կը շնչէ: Թովմասինի պատմարանը՝ զայն Կոստանցոս Քլորոսին կ'ընծայէ իր «Շրջակայը Հռոմայ» գործին մէջ: Վրայի գմբէթը՝ տարբեր հինէն՝ ժեղարուն կը պատկանի:

4) Լատերանո Ս. Յովհաննէս տաճարին Մկրտարանը: —

Ներոն առաջին դարուն զրաւեց Լատերանեան պալատը. այն ժամանակէն իբր գրաւուած սեփականութիւն, կայսերական բնակութեան ծառայեց մինչեւ Վաղենտինիանոս Գ. այսինքն մինչեւ 455 թ. անոր տեղ անցաւ Ոգոսկը մինչեւ 476, և յաջորդաբար մինչեւ Պեպինոս Կարճիկը, որ ջնջելով Հռաւեննայի փոխարքայութիւնը, երկիրն ընծայեց Ս. Պապերուն, իբրեւ վիճակ Ս. Պետրոսի Եկեղեցւոյն՝ 751 թուականին: Մկրտարանի շինութիւնը կը տատանի ընդ մէջ Ը և ԺԲ դարերուն, այսինքն է Մայր տաճարին շինութենէն յետոյ: Ուստի Գ դարուն չէ կարող ըլլալ և գործ մեծն Կոստանդիանոսի, միտ գնելով ժողովրդական ոսկեղէն վիպասանութեան:

Գ) Բիւզանդական արուեստը ըսելով եթէ կ'իմացուի կեղծոնական գմբէթը գնդաձեւ թեւերով, մինչ այս վիճակին մէջ ոչ թէ ան ունեցեր է իր ազդեցութիւնը հայկական արուեստի վրայ, այլ ընդհակառակն, ինչպէս կը տրամաբանէ Շ. Տիհլ, Արեւելք ոչինչ ընդունած է Հռոմէն (և Բիւզանդիոնէն). ընդհակառակն Արեւելքն է որ կը թափանցէ հելլենականութեան մէջ

և իր կարճնեղ թաթերը կը ձգտեցնէ դէպ ի Արեւմուտք: Եւ ես կարծեմ, եթէ լքէին աւանդական նախապաշարութիւնը և ուզէին հարցին առարկայական տեսակետով մօտենալ եւ դատելն քրիստոնէական ճարտարապետութիւնը Անտոյիայի քարճրաւանդակին՝ փոխանակ ըսելու Հայաստանի՝ պիտի տեսնէին որ Յուստինիանոս կայսրը կայսերական հրամանով այդ արուեստը Հայաստանէն Բիւզանդիոն փոխադրել տուաւ Զ դարու առաջին կէսին:

Մայրաքաղաքին մէջ, մինչ ոսկեգմբէթը կը կառուցանէին, հայ ճարտարապետներ (որովհետեւ կայսրը նաեւ այն կողմերէն ալ հրաւիրեր էր ճարտարապետներ, և կը խորհրդակցէր անոնց հետ) շատ անգամներ տազնապներէ ազատեցին այն երկու հռչակաւոր յոյն ճարտարապետները՝ ինչպէս կը յիշէ Շ. Տիհլ, որ կը թուի անվարժ էին կեղծոնական գմբէթի կառուցման:

Նախակարգելով համառոտիւ այս տեղեկութիւնները, կ'անցնիմ, ուղղակի պացուցման Հայաստանի քրիստոնէական արուեստին, անոր սկզբնականութեան իբրեւ բնաշխարհիկ արուեստ (autochtone) և ոչ որ և է տեղէ մը ներածուած:

Արեւմտեան հեղինակներ կը գրեն թէ քրիստոնէական արուեստը սկիզբ առաւ Միլանո հրովարտակով՝ 313ին: Այս կարծիքը հակառակ է պատմական ճշմարտութեան, ի նկատի առած Արեւելքը: Վասն զի Մ. Արմելլինի իր գրքին մէջ «Հռոմի Եկեղեցիները» կը գրէ. «Արեւելքի, մէջ իսկապէս ըսելով եկեղեցիներ, ըստ բառին նորագոյն իմաստով, ի հիմանէ շինուեցան եկեղեցիներ ամէն քաղաքներու մէջ, Կոստանդիանոսի ժամանակէն շատ յառաջ»: Զանց կ'ընեմ յիշելու այն ինչ որ գրեց Եւսեբիոս Պաղեստինոս, իր անունի «Պատմութիւն Եկեղեցւոյ» գրքին մէջ, զոր Արմելլինի վկայութեան կը կոչէ:

Մինչդեռ Արեւմուտքի կողմերը Գ դարու վերջերը և Գ դարու սկիզբը կատարի սաստկութեամբ կը տարածուէր Մաքսիմիանոսի եւ Դիոկղետիանոսի հալածանքը 306 թուականին, շատ ժամանակ առաջ՝ 301ին տեղի կ'ունենար Հայաստանի դարձը ի քրիստոնէութիւն Տրդատ թագաւորով և հայ ժողովուրդով ի միասին՝ Լուսաւորչի քարոզութեամբ: Մաքսիմիանոս ծանր զօրքով յարձակեցաւ քրիստոնէայ Հայաստանի վրայ, վերստին կռապաշտու կ'ըսէ Եւսեբիոս, չարաչար յաղթուեցաւ Տրդատէն և ամօթապարտ դուրս բշուեցաւ Հայաստանէն:

Լուսաւորչի երեւելի հանդիսացաւ ոչ

միայն իբրեւ հրաշագործ աւետարանիչ, այլ նաեւ կարող ճարտարապետ: Վասն զի ընդհանուր մկրտութենէն յետոյ, անմիջապէս ձեռնարկեց առաջին և զլխաւոր Հայաստանեայց եկեղեցւոյ շինութեան: Ազաթանգեղոս պատմիչ, թողած է հետագայ նկարագրութիւնը. «Եւ ինքն Գրիգորիոս զլար ճարտարութեան շինողացն ի ձեռն առեալ, գերանելացն վկայարանն հանգրուարանացն հիմունս յօրինեալ. և մի մի իւրաքանչիւր ամենայն բազմութեանն սատարութիւն ի ձեռն առեալ, ըստ գեղեցկագիր յարմարելոյ հիմնարկին ի կատարումն շինուածոյն կանգնեցին» (Ագ. ճգ. 565):

Այս եկեղեցին, կաթողիկոսական Մայր աթոռը ամենայն Հայոց, կայ և կը տեւէ տակաւին: Եթէ տասնեւեց դարերու ընթացքին արտաքին հողի երեսին մասն ապականած եւ փոփոխութեան ենթարկուած է, սակայն ստուգապէս ամրապինդ դրուած հիմերն անխախտ պահած են իրենց արժանաւոր հնութիւնը: Ուրեմն նախագահական եկեղեցւոյ մակարդաչափն ու ձեւը, զոր տուաւ Գր. Լուսաւորչի, հետեւեալն է. «Արտաքին շրջապատը քառակուսի է, ներքսապէս խաչաձեւ, հաւասարաթեւ բոլորմանի. այս յատակէն բարձր կը կանգնէր գմբէթը վերասլացիկ թմբուկով: Ո՞վ կարող է պնդել թէ հայկական ճարտարապետութիւնը, Բիւզանդիոնի ազդեցութիւնը կրած ըլլայ, որ ներածուած արուեստ մ'է, և այն՝ երկու դար յետոյ: Կարեւորագոյն ճարտարապետական տեսակետով երկրորդ եկեղեցին Ս. Հռիփսիմեանցն է: Հռոմայեցի կոյսը՝ որ մարտիրոսական պատկն առաւ Հայոց մայրաքաղաքին մէջ, արժանի էր թաղուելու այն հրաշալի վկայարանին մէջ: Շինութեան կեղծոնին վրայ կը կանգնի ընդարձակ գմբէթը եռանկիւնի գնդաձեւ թեւերուն վրայ, որուն ցած թմբուկը, ներքսալողմը բոլորակ, իսկ արտաքսապէս բազմանկիւնի, ունի բաւական լայն պատուհաններ: Այս շինութիւններն իբրեւ օրինակ ծառայեր են Բիւզանդիոնի Ս. Սոփիայի տաճարին:



Այս երկու շինութեանց մասին դժուարութիւններ երեւան եկան, անոնց հիմնարկութեան ժամանակին նկատմամբ. ընդդիմադիրներու պարագլուխը կը հանդիսանայ բարեկամս Ուսչ. Ռիւոյիրա, որ չէ կարող հանդուրժել թէ հայկական գմբէթը յառաջընթաց եղած ըլլայ Բիւզանդիոնի, և կը գրէ. «Ուսնը Հայաստանի եկեղեցական հետքը և յայտնակը շինարարական մանց կ'ընծայեն հետքիւն մը՝ զոր չեն տեսներ»։ Եւ ինքը կը խոստանայ փորձել լոկ բառերով զանոնք պայծառ լոյսի տակ դնել։ Նա բողոք բարձրացուց որ այսօրուան Մայր տաճարը տարբեր է Գ. դարու Գրիգորաշէն եկեղեցիէն, որովհետեւ Վահան Մամիկոնեան, Հայաստանի մարզպանը հիմնարկեալ ի հիմանց նորոգեց 483 թուին, վասն զի առաջինը պարսիկներ աւերեր էին 383 թուին։

Նախ և առաջ, մի անգամ նորոգուեցաւ 396ին. Ս. Սահակ Հայրապետի ձեռքով՝ որ թոռն էր Գր. Լուսաւորչի։ Ոչ մէկ տարակոյս կայ որ հաւատարիմ մնացած կ'ըլլայ նախատպին, վասն զի ամէնքը հաւատացած էին որ անոր հիմնարկութիւնն եղած է Միածինն ներշնչումով, անոր համար Մայր եկեղեցին «Էջմիածին» կը կոչուի, որ է՝ Էջը Միածին Որդւոյն Աստուծոյ։ Անկից յետոյ մինչեւ Վահանի ժամանակ դարձեալ աւերումներ եղած էին թէ՛ Պարսից և թէ՛ ուրացողներու կողմէն, ուստի ուզեց իր նախնեաց յիշատակը վերանորոգել, մանաւանդ որ գմբէթն ալ փայտեայ էր։ Գր. Լուսաւորչի ժամանակէն մինչեւ Վահան, շուրջ 180 տարիներու ընթացքին, քարահատութիւնը (steréotomie) մեծ զարգացում ունեցած էր հայ արուեստաւորներուն մէջ. և Վահան երեսուն տարուան ապստամբական կռիւներուն մէջ յաղթական ելլելով, Պարսից արքայից արքայէն տեւական խաղաղութիւն ընդունեցաւ, ուսկից քաջալերուած, գտաւ այնպիսի քարագործ մը որ յաջողեցաւ նոյն պատկերագրութեամբ կառուցանել Ս. Էջմիածինը, փայտեայ գմբէթն ալ փոխանակելով հատուածակողմ քարերով՝ եւ

դաւ նախընթաց օրինակ Կոմիտաս կաթողիկոսին։ Եւ նոյնինքն բարեկամս հաստատեց որ Հայերն եղած են առաջինները՝ եկեղեցիները քարով ծածկելուն մէջ։ Ռիւոյիրայի սայթաքումը վերագրելի է հայ լեզուի իր անգիտութեան, որ ոչ թէ փարպեցին, այլ նաեւ Սէբէոսն ալ սխալ հասկեցեր է Ս. Հռիփսիմէ տաճարի վերանորոգութեան պատմութեան մէջ։

Այնուհանդերձ որ տասնեակնեք դարեր Վահանէն յետոյ, Մայր տաճարը ենթարկուեց է այլեւայլ նորոգութեանց երկրորդական մասերու մէջ, զոր գիտնական և մասնագէտ այցելուներէն ոմանք անդրադարձեր են, և նոյնպէս Քրիստոնէական Հնագիտական Բառարանի հեղինակն ալ, որ երկար խորհրդածութիւններէ յետոյ, կը յաւելու. «Վերջապէս ներկայ վիճակի մէջ Էջմիածնի Մայր տաճարը, իր կարեւոր մասերուն մէջ մեզի ցոյց կու տայ, Յուստինիանոսի ժամանակէն կանոնաւ շինութիւն մը»։ Ուրեմն այսօր իսկ նա կը վայելէ իր արժանաւոր հնութիւնը։

Հիմա կ'անցնիմ երկրորդ եկեղեցւոյն, Ս. Հռիփսիմէի, որ նոյնպէս նորոգուեցաւ Ս. Սահակի ձեռքով, 396 թուականին։

Ահա ուրիշ աւելի փայլուն տիպար մը եւս գմբէթի, նախ քան Յուստինեան դարը։ Եօթներորդ դարու առաջին քառորդին տեղի ունեցաւ Ս. Հռիփսիմէի գերեզմանին և վրկայարանին նորոգութիւնը։ Երկուքէն մէկը գործածեր է Յ. Ռիւոյիրա, և եզրակացուցեր է որ Ս. Հռիփսիմէ նոյնպէս կը վայելէ ոչ օրինաւոր հետքիւն։

Նախ աչքի առջեւ պիտի դնեմ յիշուած բնագիրը, ըստ այնմ որ Ռիւոյիրա կը յիշէ։ «Ս. Հռիփսիմէի եկեղեցին զոր Գր. Լուսաւորչի հիմնեց հոն, ուր կ'ըսուի թէ Ս. Հռիփսիմէ իր երեսունեակերը ընկերներով նահատակուեցաւ, վերանորոգուեցաւ 618 թուին Կոմիտաս կաթողիկոսի ձեռքով (618-625 տարիներուն մէջ) նախնի շէնքը մթին էր եւ զեղջուկ տեսքով, քանդուեցաւ»։

Այս մէջբերումին մէջ կը պակսի հաւատարմութիւն. հաւատացնելու համար որ

Ս. Հռիփսիմէի տաճարը մթին և զեղջուկ տեսքով շինելով, Կոմիտաս կաթողիկոս, յամին 618, զայն ի հիմանց նորոգեց գեղեցիկ և մեծ, փառաւոր գմբէթով, ուրեմն հնութեան արժանիք չունի։ Մինչդեռ նոյնինքն Սէբէոս այն տեղւոյն մէջ երկու զատ եւ որոշ բանի վրայ կը խօսի. ա) Դամբանի, բ) Եկեղեցւոյ փայտեայ գմբէթի վրայ։

Դամբանի մասին կը գրէ թէ «Կոմիտաս քանդեց դամբարան կամ վկայարանը Ս. Հռիփսիմէի, որովհետեւ շէնքը ցած էր և մթին... ինքը վերաշինեց մատուռը և հոն իր տեղւոյն վրայ հանգչեցուց դամբանը»։

Իսկ գմբէթի մասին կը գրէ պատմիչը. «Կոմիտաս կաթողիկոս, վերցուց կաթողիկէի փայտայարկը յամին 618, ամրացուց պատերը, որոնք տկար էին, և աւելի ամուր շինեց, որպէսզի տոկան բաւեն քարէ գմբէթին ծանրութեան»։

Ուրիշ պատմիչ մ'ալ, Յովհանն կաթողիկոս, աւելի յայտնապէս կը հաւաստէ նոյն պատմութիւնը. «Գմբէթը քարէ շինեց, յարմարապէս լաւ կերպով և չքնաղ գեղեցկութեամբ»։

Ուրեմն նորոգելով փայտէ ծածքը, ամբողջեցնելով որմերը, վերաշինելով նոյն հիմերուն վրայ և նոյն մակարդակին չափով, անվայել է համարաւոր ճարտարապետին պատճառանք բերել թէ փոփոխութեան ենթարկուած է ոճն և հին պատկերագրութիւնը։ Կը վայելէ տակաւին թէ ոչ իր արժանաւոր հնութիւնը, հայկական շինութեանց գոհարը։ Ի գէպ՝ Քրիստոնէական Հնագիտական Բառարանը կը գրէ. «Ամէնէն ուշագրաւն է անշուշտ Ս. Հռիփսիմէի եկեղեցին, որուն համար ճարտարապետը ներշնչուած կը թուի Մայր տաճարի (Էջմիածնի) եական պարագաներէն, որ են՝ չորս կիսախորաններէն (abside) և կեդրոնական գմբէթէն։ Նպատակ ունեցած են անհետացնել դուռն ինկած կիսախորանները, և գմբէթը դնել քառակուսի մակարդակի վրայ. և մտածել թէ որքան

զիւրին կերպով լուծուած է խնդիրը։ Այս գեո նոր սկսնակներու աշխատութիւն մ'է, որ կրնար Բիւզանդացի վարպետ շինողներուն ծիծաղը շարժել»։

Յանիրաւի է այս եզրակացութիւնը, որովհետեւ Հայ վարպետներու շինած գործը տասներեք դար է կը տեւէ, մինչ անոնցը՝ որ պիտի կարենային ծիծաղել սկսնակներու վրայ, հազիւ երեսուն տարի տեւեց։ Յուստինիանոս ի խորոց սրտէ շնորհակալութիւն տուած կ'ըլլայ Աստուծոյ, որ մահուանէ ազատած մնացած է։

Յուստինիանոս 630-2 թուին Պարսից հետ երկար խաղաղութիւն կնքելով, գնաց Հայաստան կայսրութեան արեւելեան նոր սահմանները զիտելու և ճշդելու անձամբ որ «Պարսկահայը» կոչուեցաւ։ Կայսրն իր հանձարի սրատես աչքերով սքանչանալով նոր արուեստին վրայ, կատարեալ վիճակի մէջ Հայոց եկեղեցիներ՝ Էջմիածնի և մանաւանդ Ս. Հռիփսիմէի, հիացած և զարմացած մնացեր է ի տես երկու մայր տաճարներու գմբէթներուն վրայ։ Այն ժամանակէն սեւեռած է անշուշտ մտքին մէջ, ի հարկին Բիւզանդիոն, շինել տալու նոյն ոճով եւ ձեւով՝ շատ աւելի մեծ, աւելի շքեղ և ճոխ, և աւելի գեղեցիկը, զոր բնաւ տեսած չըլլայ Յոյն-Հռոմէական աշխարհը։

Հայոց եկեղեցիներու քրիստոնէական արուեստը, ոչ միայն Բիւզանդական ազդեցութեան տակ ինկած չէ, այլ կը հաստատուի նոր հետազոտութիւններով Ս. Էջմիածնի եւ Ս. Հռիփսիմէի տաճարներուն հնութիւնը։ Այս արուեստը նախ յաղթանակեց Բիւզանդիոնի մէջ, այսինքն Նոր Հռոմի, ուսկից առնելով իր ծանրակշիւ և հաստատուն քայլերը, հասաւ փառաւոր յաղթանակով չնաշխարհիկ քաղաքը ի յաւիտենական Հռոմ։ «Լոյսն յարեւելից» Lux ex Oriente։ Թող խօսի ճարտարապետ Յ. Ռիւոյիրայի ականջը, որ ճանչցաւ ճշմարտութիւնը և ոչ իբրեւ բնաշխարհիկ խոստովանեցաւ Հայկական ճարտարապետութիւնն և արուեստը։

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ